ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-21-9/30-1

ք. Երևան 25-ը սեպտեմբերի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս **ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»,** մի կողմից, և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Վաճառող»** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***23,777,980 (քսաներեք միլիոն յոթ հարյուր յոթանասունյոթ հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակի: Վճարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:***

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[21] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը**:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011144129 ՀՎՀՀ 02522157 ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ Ք. Երևան, Արզումանյան 32-10 «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 217002182558001 ՀՎՀՀ 01210095 / տնօրեն
Ա. ԱՍԼԱՆՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
	Հնգամյա Արզումյան ԱՀ 0337548

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-9/30-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի				
Հ/հ	**անվանումը**	**տեխնիկական բնութագիր**	**ապրանքային նշանը**	**արտադրողի անվանումը**
1	Պրոգեստերոն CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Progesterone G3 CS Elecsys	Roche Diagnostics
4	DHEA-S CS ռեակտիվի կալիբրատոր	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	DHEA-S CS Elecsys	Roche Diagnostics
6	Anti-Թիրեոգլոբուլին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Anti-TG CS Elecsys	Roche Diagnostics
7	Anti-TPO ռեակտիվ CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Anti-TPO CS Elecsys	Roche Diagnostics
8	Էստրադիոլ CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Estradiol G3 CS Elecsys	Roche Diagnostics
16	Ինսուլին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Insulin CS Elecsys	Roche Diagnostics
17	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն --PSA CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Total PSA G2 CS Elecsys V3	Roche Diagnostics
18	Բետա խորիոն գոնադոտրոպին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	HCG+beta CS Elecsys V2	Roche Diagnostics
19	Ալֆա ֆետոպրոտեին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	AFP G2 CS Elecsys V2.1	Roche Diagnostics
20	Պարա թիրոիդ հորմոն PTH CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	PTH CS Elecsys V2	Roche Diagnostics
22	CA 125 CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	CA 125 G2 CS G2 Elecsys	Roche Diagnostics
23	CA 15-3 CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան	CA 15-3 G2 CS Elecsys	Roche Diagnostics

		ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:		
24	CA 19-9 CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	CA 19-9 CS Elecsys	Roche Diagnostics
28	Պրեսիկոնտրոլ Universal 4X3 ml	Լրակազմում 4x3մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	PreciControl Universal Elecsys V2	Roche Diagnostics
29	Պրեսիկոնտրոլ Tumor Marker 4X3 ml	Լրակազմում 4x3մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	PreciControl TM Elecsys	Roche Diagnostics
41	Պրեսիկոնտրոլ Varia 4X3ml	Լրակազմում 4X3 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	PreciControl Varia Elecsys	Roche Diagnostics
42	Պրեսիկոնտրոլ Thyro AB 4X2ml	Լրակազմում 4X2 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	PreciControl Thyro AB Elecsys V2	Roche Diagnostics
44	Լուծիչ Universal 2X16	Լրակազմում 2x16 մլ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Universal Diluent 2x16ml Elecsys,cobas e	Roche Diagnostics
45	ProCell 2x2 l	Լրակազմում 2x2 լ, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	ProCell M 2x2 L Elecsys,cobas e	Roche Diagnostics
46	CleanCell 2x2 l	Լրակազմում 2x2 լ, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	CleanCell M 2x2 L Elecsys,cobas e	Roche Diagnostics
47	PreClean M 5x600 ml	Լրակազմում 5x600 մլ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	PreClean M Elecsys,cobas e	Roche Diagnostics
48	ProbeWash M 12x70 ml	Լրակազմում 12x70 մլ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Probe Wash M Elecsys,cobas e	Roche Diagnostics
49	Assay Tips/Cups incl. 8 WL 8x6 (84x tip/cup)	Լրակազմում 48 x 84 tips/cups incl. 8 WL	Assay Tip/Cup Elecsys	Roche Diagnostics
50	Պրոսել, 6 X380 ml	Լրակազմում 6հատ 380 մլ շիշ, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	ProCell Elecsys,cobas e	Roche Diagnostics
51	Կլինսել, 6 X 380 ml	Լրակազմում 6հատ 380 մլ շիշ, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	CleanCell Elecsys,cobas e	Roche Diagnostics
52	Սիսկլին, 5 X 100 ml	Լրակազմում 5հատ 100 մլ շիշ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	ISE cleaning solution Sys Clean	Roche Diagnostics
53	Ծայրադիրներ 30 x 120	Լրակազմում՝ 30x120, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	ASSAY TIP ELECSYS 2010/cobas e411	Roche Diagnostics
54	Միկրոկյուվետներ, 60 x 60	Լրակազմում 60 x 60 , գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	ASSAY CUP ELECSYS2010/cobas e411	Roche Diagnostics
56	Cell Check350 թեսթ	Նախատեսված է e 411 և e 601 անալիզատորների համար, գործարանային փաթեթավորումով	Cell Check Elecsys,cobas e	Roche Diagnostics
57	Blank cell	Նախատեսված է e 411 և e 601 անալիզատորների համար, գործարանային փաթեթավորումով	BlankCell Elecsys,cobas e	Roche Diagnostics

58	SAP	Նախատեսված է e 411 և e 601 անալիզատորների համար, գործարանային փաթեթավորումով	SAP Test Elecsys,cobas e	Roche Diagnostics
59	pocH-pack 65 XL ռեագենտ	Նախատեսված է poch 100i անալիզատորի համար, լրակազմում՝ 9 լ լուծիչ և 185 մլ լիզիս ռեագենտ մեկ տուփում, հետազոտվող նմուշը՝ երակային արյուն, 15-25 C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ,	POCH-PACK 65XL	Sysmex
60	Ստրոմատոլայզեր FB 5L	5լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, նախատեսված է XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար:	STROMATOLYSER-FB 5L	Sysmex
61	Ստրոմատոլայզեր - 4DL 5L	5լ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, նախատեսված է XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար:	STROMATOLYSER-4DL 5L	Sysmex
62	Ստրոմատոլայզեր - 4DS 42ml	42մլ քանակի, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով, նախատեսված է XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար:	STROMATOLYZER-4DS, 1 x 42ML	Sysmex
63	Սուլֆոլայզեր 500ml	500 մլ, XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար: 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ	SULFOLYSER, 1 x 500ML	Sysmex
64	Ռետսերչ II 1L+12մլ	Լրակազմում՝ 1լ+12 մլ, XT 4000i հեմատոլոգիական անալիզատորի համար: 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով	RETSEARCH(II) 1L + 12ML	Sysmex
65	Լվացող հեղուկ	Cellclean, 50մլ տարողությամբ նախատեսված Sysmex հեմատոլոգիական սարքերի համար, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով	Cellclean 50 ML	Sysmex
66	Ռեագենտ	Cellpack 10 լիտր տարողությամբ, KX-21 և XT 4000i հեմատոլոգիական անալիզատորների համար 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով	CELLPACK 10L	Sysmex

Ծանոթություն.

Ապրանքները պետք է ունենան.

1.Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:

2.Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP կամ այլ):

3.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

5. Մատակարարման վայր սահմանել ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բժշկական բազա:

****թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ:***

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ Անցագիր
ԱՀ 0337548

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	մատակարարումը՝ 2021թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2021թ.
1	Պրոգեստերոն CS	լրակազմ	2	26,800	53,600	2
4	DHEA-S CS ռեակտիվի կալիբրատոր	լրակազմ	2	26,800	53,600	2
6	Anti-Թիրեոգլոբուլին CS	լրակազմ	5	26,800	134,000	5
7	Anti-TPO ռեակտիվ CS	լրակազմ	5	25,500	127,500	5
8	Էստրադիոլ CS	լրակազմ	2	26,800	53,600	2
16	Ինսուլին CS	լրակազմ	2	30,000	60,000	2
17	Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն --PSA CS	լրակազմ	4	30,000	120,000	4
18	Բետա խորիոն գոնադոտրոպին CS	լրակազմ	2	26,800	53,600	2
19	Ալֆա ֆետոպրոտեին CS	լրակազմ	2	26,800	53,600	2
20	Պարա թիրոիդ հորմոն PTH CS	լրակազմ	2	26,800	53,600	2
22	CA 125 CS	լրակազմ	2	26,800	53,600	2
23	CA 15-3 CS	լրակազմ	2	26,800	53,600	2
24	CA 19-9 CS	լրակազմ	2	26,800	53,600	2
28	Պրեսիկոնտրոլ Universal 4X3 ml	լրակազմ	4	30,190	120,760	4
29	Պրեսիկոնտրոլ Tumor Marker 4X3 ml	լրակազմ	2	55,090	110,180	2
41	Պրեսիկոնտրոլ Varia 4X3ml	լրակազմ	2	72,000	144,000	2
42	Պրեսիկոնտրոլ Thyro AB 4X2ml	լրակազմ	2	82,000	164,000	2
44	Լուծիչ Universal 2X16	լրակազմ	10	16,000	160,000	10
45	ProCell 2x2 l	լրակազմ	10	53,000	530,000	10
46	CleanCell 2x2 l	լրակազմ	10	53,000	530,000	10
47	PreClean M 5x600 ml	լրակազմ	10	44,000	440,000	10
48	ProbeWash M 12x70 ml	լրակազմ	2	34,000	68,000	2
49	Assay Tips/Cups incl. 8 WL 8x6 (84x tip/cup)	լրակազմ	2	188,000	376,000	2
50	Պրոսել, 6 X380 ml	լրակազմ	10	24,000	240,000	10
51	Կլինսել, 6 X 380 ml	լրակազմ	10	24,000	240,000	10
52	Սիսկլին, 5 X 100 ml	լրակազմ	1	20,490	20,490	1
53	Ծայրադիրներ 30 x 120	լրակազմ	2	50,600	101,200	2
54	Միկրոկյուվետներ, 60 x 60	լրակազմ	1	49,450	49,450	1
56	Cell Check350 թեսթ	լրակազմ	2	6,000	12,000	2
57	Blank cell	լրակազմ	2	8,000	16,000	2
58	SAP	լրակազմ	2	22,000	44,000	2

59	pocH-pack 65 XL ռեագենտ	լրակազմ	300	46,500	13,950,000	300
60	Ստրոմատոլայզեր FB 5L	հատ	8	60,000	480,000	8
61	Ստրոմատոլայզեր - 4DL 5L	հատ	8	75,000	600,000	8
62	Ստրոմատոլայզեր - 4DS 42ml	հատ	8	60,000	480,000	8
63	Սուլֆոլայզեր 500ml	հատ	8	21,000	168,000	8
64	Ռետսերչ II 1L+12մլ	լրակազմ	5	150,000	750,000	5
65	Լվացող հեղուկ	հատ	60	36,000	2,160,000	60
66	Ռեագենտ	հատ	60	15,000	900,000	60
Ընդամնեը					23,777,980	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

վ/հ Հայրիկ Սոլոյան
ԱՀ 033 7548

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-9/30-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Գնման առարկայի			
չ/հ	**CPV և ապրանքի անվանումները**	**CPV կոդը**	**Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ պետական բյուջեի 2021թ. հատկացումների հաշվին, 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝**
1.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Պրոգեստերոն CS	33691423/161	53,600
4.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**DHEA-S CS ռեակտիվի կալիբրատոր	33691423/164	53,600
6.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Anti-Թիրեոգլոբուլին CS	33691423/166	134,000
7.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Anti-TPO ռեակտիվ CS	33691423/167	127,500
8.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Էստրադիոլ CS	33691423/168	53,600
16.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Ինսուլին CS	33691423/176	60,000
17.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Պրոստատ սպեցիֆիկ անտիգեն --PSA CS	33691423/177	120,000
18.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Բետա խորիոն գոնադոտրոպին CS	33691423/178	53,600
19.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Ալֆա ֆետոպրոտեին CS	33691423/179	53,600
20.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Պարա թիրոիդ հորմոն PTH CS	33691423/180	53,600
22.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**CA 125 CS	33691423/182	53,600
23.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**CA 15-3 CS	33691423/183	53,600
24.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**CA 19-9 CS	33691423/184	53,600
28.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Պրեսիկոնտրոլ Universal 4X3 ml	33691400/1	120,760
29.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Պրեսիկոնտրոլ Tumor Marker 4X3 ml	33691400/2	110,180
41.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Պրեսիկոնտրոլ Varia 4X3ml	33691400/14	144,000
42.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Պրեսիկոնտրոլ Thyro AB 4X2ml	33691400/15	164,000
44.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Լուծիչ Universal 2X16	33691400/17	160,000
45.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**ProCell 2x2 l	33691400/18	530,000
46.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**CleanCell 2x2 l	33691400/19	530,000
47.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**PreClean M 5x600 ml	33691400/20	440,000
48.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**ProbeWash M 12x70 ml	33691400/21	68,000
49.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Assay Tips/Cups incl. 8 WL 8x6 (84x tip/cup)	33691400/22	376,000
50.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Պրոսել, 6 X380 ml	33691400/25	240,000
51.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Կլինսել, 6 X 380 ml	33691400/26	240,000
52.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Սիսկլին, 5 X 100 ml	33691400/28	20,490
53.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Ծայրադիրներ 30 x 120	33691400/29	101,200
54.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Միկրոկյուվետներ, 60 x 60	33691400/30	49,450

56.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Cell Check350 թեսթ	33691400/31	12,000
57.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Blank cell	33691400/32	16,000
58.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**SAP	33691400/33	44,000
59.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**pocH-pack 65 XL ռեագենտ	33691400/34	13,950,000
60.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/**Ստրոմատոլայզեր FB 5L	33691162/51	480,000
61.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/**Ստրոմատոլայզեր - 4DL 5L	33691162/52	600,000
62.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)/**Ստրոմատոլայզեր - 4DS 42ml	33691160/2	480,000
63.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)/**Սուլֆոլայզեր 500ml	33691160/3	168,000
64.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Ռետսերչ II 1L+12մլ	33691400/35	750,000
65.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)/**Լվացող հեղուկ Cellclean	33691160/4	2,160,000
66.	**Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)/**Cellpack 10 L ռեագենտ	33691160/5	900,000
Ընդամենը			**23,777,980**

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հայտնի Սողոյան
ԱՀ 0337548

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-9/30-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-9/30-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն